

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՐԳԸ ՍՈՑԻՈՍԵՎԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈՒՍԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԵՋՍՈՒՄ

Ն. Ժ. ՄԿՐՏՁՅԱՆ

Ամեն դարաշրջան ծնում ու վեր է հանում խնդիրների շարք, որը առավել հրատապ է ու հնչել այդ ժամանակաշրջանի համար: Դրանք կարծես մարտահրավեր ու միաժամանակ փորձաքար լինեն՝ ուղղված մարդկության անսահման հավակնոտությանն ու անհոգությանը, սեփական ուժերի նկատմամբ անսպառ հավատին: Թերևս մեր ժամանակաշրջանի համար այդպիսին կարելի է համարել վերջին տարիներին քննարկման լայն առարկա դարձած անցումային հասարակության հիմնահարցը՝ դրանից բխող բոլոր հարցադրումներով: Հետաքրքիրն այն է, որ խնդիրը այսպես թե այնպես արժարժվել է հասարակության տարբեր շերտերում ընթացող բազմաբնույթ ու բազմապիսի գործընթացների իմաստավորման հետ ամենաանմիջական առնչություն ունեցող ուսմունքներում ու տեսություններում: Սակայն անցումային հասարակության հետ կապված լուրջ հետազոտություններն ավելի համակարգային ու հետևողական են դարձել խորհրդային սոցիալ-տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային համակարգի փլուզումից հետո, երբ ծագեցին փոխակերպումների հաջորդականության, անհրաժեշտության ու նպատակահարմարության, ինչպես նաև ազգային ինքնության պահպանման ու արդիականացման մի շարք հիմնախնդիրներ: Այդ խնդիրների իմաստավորման ու լուծման ուղիների փնտրտուքի ընթացքում պարզվեց, որ սոցիալ-փիլիսոփայական միտքը պատրաստ չէ համակարգային արդի փոխակերպումներին, չունի քիչ թե շատ ամբողջական ու հիմնավոր հայեցակարգ և շատ հաճախ ղեկավարվում է իրադարձություններին առընթեր տրամաբանության պարտադրանքներով:

Սա է գուցե պատճառը, որ մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել անցումային հասարակության տարաբնույթ բնութագրությունների, սահմանումների, որոնցից յուրաքանչյուրը շեշտը դնում է այս կամ այն գործոնի կամ իրողության վրա: Ինքը հասկացությունն արդեն հուշում է, որ գործ ունենք այնպիսի յուրահատուկ իրավիճակի հետ, երբ միևնույն սոցիալական համակարգը միաժամանակ գործում ու գործառնում է երկու տարբեր սոցիոմշակութային դաշտերում՝ կատարելով տարբեր, իսկ երբեմն նաև իրարամերժ գործառույթներ: Այդ տեսակետից կարելի է գշել, որ «անցումային հասարակություն» հասկացությունը բնութագրում է սոցիալական համակարգի այն վիճակը, երբ հասարակության նախորդ որակական որոշակիությունը այլևս գերիշխող չէ. իսկ նորը գտնվում է լինելիության պրոցեսում¹: Այսինքն՝ համակարգի գործառնության, վերարտադրության ու զարգացման նախկին մեխանիզմներին զուգահեռ ձևավորվում են նորերը, որոնք փորձում են «ամեն գնով» դուրս մղել նախորդները՝ հաճախ ստանալով պարտադրված-վարչական բնույթ: Արդյունքում կառուցվածքային խորը փոխակերպումների մեջ հայտնված սոցիալական համակարգը ենթարկվում է սոցիալական «երկրաշարժերի», ձևախելվում է հասարակության բոլոր ոլորտներում հաստատված փոխազդեցությունների արդեն կայացած կարգը,

¹ Է. Ա. Հարությունյան, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 3:

և գործառնական անորոշության ու աններդաշնակության «սխտանիշներով» վարակված համակարգը հարցականի տակ է դնում կիրառական նշանակություն ունեցող նորմերի, վարքի կարծրատիպերի, ընդհանրապես մշակութային դաշտի ողջ պարունակությունը՝ նրանցում ամփոփված տարաբնույթ արժեքներով ու դրանց իրացման միջոցներով: Այս կապակցությամբ հայտնի տեսաբան Պ. Սորոկինը, խնդիրը քննարկելով անձ-հասարակություն-մշակույթ եռամիասնության տեսանկյունից, գրում է. «Հասարակությունը կարգավորված է, երբ նրա մշակույթի և սոցիալական հարաբերությունների համակարգը ինտեգրված ու բյուրեղացված է: Այն դառնում է անկարգ, երբ այդ համակարգը կազմալուծվում է ու մտնում անցումային փուլ»²: Նա սոցիոմշակութային տիպը բնութագրում է որպես հասարակության հիմնային ու էական համակարգաստեղծ գործոն, որի փոփոխությունը փաստում է համակարգային ու կառուցվածքային խորքային փոփոխությունների մասին: Փոխակերպվում է ամենատարբեր սոցիալական փոխազդեցությունների տնտեսական, քաղաքական ու իրավական, գաղափարական ու բարոյական հարաբերությունների բնույթը, փոխակերպման անհրաժեշտություն է առաջանում նաև մշակույթի համակարգում և, հակառակը, մշակույթի համակարգում տեղի ունեցող տեղաշարժերը վկայում են սոցիալականության տիպի փոփոխության մասին:

Այս առնչությամբ իրավամբ հարց է ծագում՝ արդյոք նման փոխակերպումները անցնում են հարթ և սահուն, առանց արգելակող ու անբնական շեղումների, և ի՞նչ երևույթների հետ կարելի է բախվել նման պարագայում: Հարցի պատասխաններից մեկն ակնհայտ է. կոնֆլիկտները համակարգային փոխակերպումներին բնորոշ և անխուսափելի ուղեկիցներ են: Կոնֆլիկտներ, որոնք նաև սոցիոմշակութային բնույթ են կրում, քանզի վերաբերում են հասարակական, հետևաբար՝ սոցիոմշակութային նոր տիպի լինելիությանը: Խոսքը, սակայն, ոչ միայն երկու սոցիոմշակութային դաշտերի միաժամանակյա գոյության ու գործառնության և դրա հետևանքով ձևավորված կոնֆլիկտների մասին է, այլ առաջին հերթին սոցիալականի ու մշակութայինի միջև ծագած հակասության ու «անհամապատասխանության» մասին:

Անցումային հասարակության, մի կողմից տնտեսական ու քաղաքական, մյուս կողմից սոցիալական ոլորտներում ընթացող փոփոխությունների տեսլերի անհամաչափությունը, ազդելով վերջինիս վրա, որոշակի լարվածություն ու «փոխըմբռնման» բացակայության մթնոլորտ է ստեղծում սոցիալականի ու մշակութայինի միջև, ինչը չի կարող նպաստավոր լինել մոնոլիտ սոցիոմշակութային տիպի լինելիության ու կայացման համար: Անցումային փուլում նմանատիպ կոնֆլիկտների առկայությունը ենթադրում է, որ երևույթների ընկալման, մեկնաբանման և համապատասխան սոցիալական վարքի դրսևորման ժամանակ հոգեբանական տարրերի ազդեցությունը կտրուկ մեծանում է, սոցիոմշակութային կոնֆլիկտները հեշտությամբ փոխակերպվում են հոգեբանականի, և նվազում է ընկերային խմբերի ու սոցիալական հաստատությունների գործառնական արդյունավետությունը: Այդ ամենի հետևանքով արժեքային համակարգը դառնում է այլընտրանքային և կորցնում վարքի հստակ կարգավորման երբեմնի գործառույթը: Ընդ որում, այս երևույթները ակնհայտորեն միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են ու բխում են մեկը մյուսից:

Անցումային փուլում գտնվող ցանկացած հասարակության համար, երբ այլևս լիարժեք չեն գործում գոյության ու զարգացման նախկին կազմավորումները, իսկ նորերը դեռևս չեն ձևավորվել, միշտ էլ առաջին պլան են մղվում վարքի կարգավորման այնպիսի շարժառիթներ, որոնք ընդգծված իրացիոնալ բնույթ

² П. А. Сорокин. Кризис нашего времени. - В кн.: "Американская социологическая мысль", М., 1996, с. 364.

ունեն: Այսինքն՝ այլևս չեն գործում արժեքային այն բնույթի կողմնորոշիչները, որոնք միավորում ու ուղղորդում են հարաբերականորեն կայուն փուլում գտնվող հասարակությանը: Պ. Սորոկինը այս առնչությամբ նկատում է, որ նման պայմաններում արժեքներն իրենց տեղը զիջում են զուտ զգայական պահանջմունքներին: Անձն ու հասարակությունը, որպես կանոն, դրսևորում են իմպուլսիվ վարք և իրենց պայքարի մեջ ցուցաբերում անհանդուրժողականություն: «Մշակույթի և հասարակության մի հիմնարար ձևից մյուսի անցման փուլերում, - գրում է նա, - երբ քանդվում են մշակութային նախկին կառույցները, իսկ նորերը դեռևս չեն ձևավորվել, սոցիոմշակութային արժեքները դառնում են գրեթե ամբողջովին «ատոմիզացված», և տարբեր մարդկանց ու խմբերի արժեքների միջև կոնֆլիկտները դառնում են անհաշտ՝ անխուսափելիորեն ծնելով ամենալայն բազմազանության ու հատուկ ինտենսիվության պայքար: Ի հավելումն այլ կոնֆլիկտների, հասարակության մեջ այդ պայքարը դրսևորվում է հանցագործությունների աճի և պատժի դաժանության, ինչպես նաև խոտովությունների, ապստամբությունների ու հեղափոխությունների ձևով»³: Դա նշանակում է, որ նման դեպքերում գործ ունենք այսպես կոչված հոգեբանական ինֆլյացիայի (ընդլայնման հետ): Մի երևույթ, երբ հասարակական սուբյեկտը, ի հաշիվ չօգտագործված անգիտակցական ռեսուրսների, ընդլայնում է գիտակցական գործունեության սահմանները՝ դրսևորելով զլխավորապես իռացիոնալ և իմպուլսիվ վարք:

Այս առնչությամբ Մ. Դոյչը նկատում է, որ տարաբնույթ գաղափարների ու արժեքների բախումները, որպես կանոն, առաջ են բերում սոցիոմշակութային կոնֆլիկտներ, քանի որ կոնֆլիկտի կողմերից առնվազն մեկը փորձում է իր պատկերացումները պարտադրել մյուսներին⁴: Այս միտումը առավել սուր դրսևորումներ ունի հատկապես անցումային հասարակություններում, քանի որ արժեքային ընդհանրական համակարգի բացակայության պարագայում յուրաքանչյուր ոք ձգտում է սեփական պատկերացումներն ու արժեքային կողմնորոշումները դարձնել կամ ներկայացնել որպես համակարգի սոցիալական վարքի գերիշխող ծրագիր: Այդ իսկ պատճառով մարդկանց ինքնահաստատման ձևերը ստանում են ընդօժված ուժային ու հարկադրական բնույթ: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ սոցիոմշակութային կոնֆլիկտները հաճախ այլակերպվում և սպառողական երանգներ են ստանում, որը ձևավորված պահանջմունքների ու նրանց իրացման միջոցների սպառողական բնույթի արդյունք է, ինչի հետևանքով սպառողական հոգեբանությունը հետևողականորեն ու մեծ հավանականությամբ կարող է վերածվել նաև սպառողական գաղափարախոսության: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ փոխակերպումները մի կողմից արտացոլում են հասարակության գործառնության նախկին որակները, մյուս կողմից՝ ապագա հնարավոր վիճակը: Բացի այդ, փոխակերպվող գործընթացների իրական վիճակից ելնելով՝ կարելի է մոտավոր պատկերացում կազմել համակարգի ինքնազարգացման և ինքնավերարտադրության հնարավորությունների մասին: Ի դեպ, համակարգի այդ որակները պայմանավորված են սոցիալական ուժերի հարաբերակցությամբ, համեմատական ազդեցիկությամբ ու ակտիվությամբ⁵: Հասարակության փոխակերպվող կառուցվածքի մեջ կարելի է առանձնացնել բարեփոխական, սոցիալ-նորարական ու հարմարվողական կարողություններ, որոնցից յուրաքանչյուրի իրականացման համար գործում են սոցիալական կառուցվածքում ընդգրկված տարբեր խմբեր:

³ Նույն տեղում, էջ 397:

⁴ St'u M. Дойч, Разрешение конфликта. - В кн.: "Конфликтология: Хрестоматия", М., 2002, էջ 68:

⁵ St'u T. И. Заславская, Социокультурный аспект трансформации российского общества, "Социологические исследования", М., 2001, № 8, էջ 4:

Դրանցից սոցիալական ընտրանին, որպես կանոն, հասարակության բարեփոխական պոտենցիալի կրողն է, միջին շերտը՝ նորարականի, իսկ «պահպանողական մեծամասնությունը»՝ հարմարվողականի: Ասվածից ակնհայտորեն բխում է, որ քաղաքական իշխանությամբ օժտված հասարակական սուբյեկտների կամքն է որոշում, թե հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային բարեփոխումները ինչ ընթացք ու բովանդակություն կունենան:

Անդրադառնալով անցումային հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային կոնֆլիկտներին՝ հարկ է նկատել, որ դրանք կատարում են նաև համակարգը համախմբելու և անորոշությունները հաղթահարող գործառույթ: Բանն այն է, որ կոնֆլիկտները օժանդակում են նոր սոցիալական նորմերի առաջացմանը կամ՝ գոյություն ունեցողի բարեփոխմանը: Այս տեսանկյունից սոցիոմշակութային կոնֆլիկտները սոցիալական նորմերը փոփոխված հանգամանքներին համարժեք հարմարեցնելու միջոց են: Ըկուն կառուցվածքով հասարակությունները կոնֆլիկտային իրավիճակներից որոշակի օգուտ են քաղում, քանզի վերջիններս, օժանդակելով սոցիալական նորմերի առաջացմանն ու փոփոխմանը, նպաստում են նոր պայմաններում համակարգի գոյությանն ու գործառնությանը⁶: Իսկ դա նշանակում է, որ սոցիոմշակութային կոնֆլիկտները պետք է որ նպաստեն նաև այնպիսի երևույթի արդիականացմանը, ինչպիսին ազգային ինքնությունն է: Չէ՞ որ սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոխակերպումների հետևանքով ազգային ինքնության և նոր կարգի հարաբերությունների միջև ծագած որոշակի հակասություններն ու անհամապատասխանությունները, ի վերջո, այդ կոնֆլիկտների առաջացման պատճառներն են: Եվ վերջապես՝ խիստ այժմեական է դարձել ազգային ինքնության և քաղաքակրթության իշխող միտումների համամասնության և հարաբերակցության ճշգրտման հիմնահարցը:

Ի սկզբանե հոգեբանական երևույթ լինելով՝ «ինքնությունը» և առանձնակի ազգային ինքնությունը, դարձել են ամենատարբեր գիտական դիսցիպլինաների, հետազոտական տեսանկյունների ու մոտեցումների առարկա, ինչը վկայում է նրա կարևորության մասին: Գրականության մեջ տեղ գտած տեսակետներից մեկի համաձայն՝ «ինքնությունը տալիս է մեզ այն բանի իմացությունը, թե ով ենք մենք և ինչպես ենք կապված այլոց և այն աշխարհի հետ, որում ապրում ենք: Ինքնությունները նշում են այն ուղիները, թե ինչով ենք մենք նման նրանց, որոնց հետ կիսում ենք որոշակի դիրքորոշում, և ինչով տարբեր մյուսներից, որոնց հետ չենք կիսում»⁷:

Պետք է ասել, որ մասնագիտական գրականության մեջ «ինքնություն» հասկացությունը մեկնաբանվում է երկու տեսանկյունից: Մեկը, դասական գիտությանը բնորոշ դիրքորոշումներից ելնելով, ինքնությունը մեկնաբանում է որպես կայուն ու անփոփոխ երևույթ, որը ապահովում է որոշակի կազմակերպված հանրույթի ամբողջությունը հարափոփոխ պայմանների ու դեպքերի պարագայում: Մյուսը, ընդհակառակը, հետևելով հետմոդեռնիստական և, հատկապես, հետստրուկտուրալիստական ավանդույթներին, ինքնությունը քննարկում է «փոփոխություն», «փոխակերպում», «լինելիություն» հասկացությունների հետ ունեցած կապի մեջ՝ ինքնության երևույթը դիտարկելով որպես շարունակական ու անընդհատ գործընթաց⁸:

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից աշխարհում ինքնությունները ծնվում են բազմաթիվ աղբյուրներից՝ որոշակի ազգին, սոցիալական դասին, համայնքին,

⁶ St' u Л. А. Козер, Функции социального конфликта. - В кн.: "Американская социологическая мысль", М., 1996, էջ 544:

⁷ Kathryn Woodward, Introduction. «Identity and difference», London, 1999, p. 1-2.

⁸ St' u Hall Stuart, Cultural identity and diaspora. «Identity and difference», London, 1999, p. 51-52.

սեռին պատկանելուց: Ինքնությունը «մի կողմից բավարարում է անհատի՝ այլ մարդկանցից յուրօրինակ ու անկախ լինելու, մյուս կողմից՝ խմբին պատկանելու ու պաշտպանվածության պահանջումները»⁹, հետևաբար ազգային ինքնությունը սոցիալ-հոգեբանական ինքնության տարատեսակ է, որը ուղեկցվում է անձի էթնիկ հանրությո՞նն պատկանելու խորքային ու հուզական զգացումով և ուրույն տեղ ունի հասարակական սուբյեկտի մնացած բոլոր հնարավոր ինքնությունների շարքում՝ մեծապես ազդելով նրանց ձևավորման գործընթացի վրա: Ազգային ինքնությունը, ինչպես նաև ինքնությունն ընդհանրապես, ձևավորվում է սոցիալականացման ընթացքում, երբ մարդը որոշակի մշակույթի համակարգից յուրացնում է տվյալ պայմանների համար անհրաժեշտ ու կենսական արժեքներ, վարքի ու աշխարհընկալման մոդելներ, որի հետևանքով աշխարհի մասին պատկերացումները կազմակերպվում են կապակցված մեկնաբանությունների մեջ՝ գաղափարների, կարծրատիպերի, ակնկալիքների ձևով՝ հանդես գալով իբրև սոցիալական վարքի կարգավորիչներ: Ընդ որում, յուրացման գործընթացը անպայմանորեն ենթադրում է այդ արժեքների, նորմերի հետ նույնականացման երևույթ, հակառակ դեպքում ինքնության մասին խոսել, լինի այն սեռային, թե ազգային, սոցիալական թե խմբային, անհիմաստ է: Այսինքն՝ ինքնությունը հանդես է գալիս իբրև յուրահատուկ սոցիալ-հոգեբանական կազմավորում, հասարակական սուբյեկտի «ներքին մեկնակետ ու հենարան», որը ծնվում ու ձևավորվում է էթնոմշակութային դաշտի էմոցիոնալ յուրացման (նույնականացման անհրաժեշտ բաղադրատարրով) արդյունքում և, կախված այդ ձևավորված ինքնության «որակից» ու բնույթից, իր հերթին պայմանավորում է նրանում հնարավոր տեղաշարժերն ու փոփոխելիությունները: Ընդ որում, յուրացման ընտրողական բնույթը պետք է որ միտված լինի դեպի այն այլընտրանք կամ այլընտրանքների շրջանակը, որոնք առավելապես «հարազատ» ու նշանակալի են ինքնության լինելիության համար: Հակառակ դեպքում, եթե յուրացման ամեն մի փորձ ցանկացած շերտ ինքնության համար կենարար չէ, «ապա ինքնությունը գերի է դարձնում ժամանակին, կաշկանդում նրա մարդկային (ազգային) առումով աննշանակալի, ... այդ էության յուրահատկությունը վերացնող կապերով»¹⁰:

Ազգային ինքնության մասին խոսելիս չենք կարող չանդրադառնալ նաև այնպիսի երևույթի, ինչպիսին ազգային ինքնագիտակցությունն է, որը մեկնաբանվում է որպես «էթնոսի էթնոտարանջատիչ և էթնոմիացնող հատկանիշների մասին հարաբերականորեն կայուն գիտակցված պատկերացումների ու գնահատականների համակարգ»¹¹, այսինքն՝ այն տվյալ էթնոսի պատմական անցյալի ու ճակատագրի, մշակույթի, լեզվի, տարածքի, ընդհանրական «մենքի» մասին պատկերացումն ու արժևորումն է: Ազգային ինքնագիտակցության նման մեկնաբանությունից պարզ է դառնում, որ այն բացառապես նույնականացման ընդգրկում գործընթացի արգասիք է և մեծապես կախված է հատկապես նույնականացման ազգային շերտի հուզական երանգավորումից (դրական կամ բացասական):

Յուրաքանչյուր էթնոս ունի որոշակի «սոցիոմշակութային կենտրոն»՝ արժեքների ու հավատալիքների ամբողջություն, որը կազմում է այդ ազգի ներքին մշակութային հիմքն ու կմախքը: Նրանում ընդգրկված ազգային հաստատունները արմատացած են անգիտակցականում և հաճախ չեն գիտակցվում ոչ տվյալ ազգի ներկայացուցիչների և ոչ էլ դիտարկողների կողմից: Յուրաքանչյուր ազգի համար այդ հիմքը եզակի է ու անկրկնելի¹²: Մշակույթի համակարգում ընդգրկված

⁹ А. П. Садохин. Этнология, М., 2001, с. 32.

¹⁰ Ռ. Քոչարյան, Ինքնություն և սեփականություն, «Ինքնություն», Եր., 1995, էջ 45:

¹¹ В. Ю. Хотинец. О содержании и соотношении понятий этническая самоидентификация и этническое самосознание. «Социологические исследования», 1999, № 9, с. 69.

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 141:

արժեքները, նորմերն ու վարքի մոդելները, անկախ նրանից ընդունվում են, թե ոչ, մեծապես պայմանավորում են տվյալ անձի կամ մարդկային խմբի ով լինելը: Փաստորեն արժեքների այդ համակարգը դառնում է խորհրդանիշերի այն աշխարհը, որի շնորհիվ մարդը տարբերակում է բարին չարից, օգտակարը վնասակարից, ճշմարտությունը մոլորությունից: Դրա շնորհիվ պատասխաններ են ստանում «ի՞նչի համար եմ ապրում», «ի՞նչի համար եմ գործում» և նմանատիպ այլ հարցեր:

Իսկ դա նշանակում է, որ էթոնոշակությանի արժեքների համակարգը ձևավորում ու կոնկրետ իմաստ է հաղորդում սոցիալական հարաբերություններին: «Աշխարհը՝ որպես կամք և գործունեություն, նույնքան անհասկանալի է, որքան օբյեկտների աշխարհը, քանի դեռ մեզ անհայտ են այդ կամքի արժեքները և այն բարիքները, որոնք ծնում է այդ գործունեությունը»¹³, - գրում է Հ. Ռիկկերտը: Դրանք նաև այն արժեքներն են, որոնք մարդուն չեն սահմանափակում սուկ էմպիրիկ ու առօրեական խնդիրների լուծմանն ուղղված շահերի ու պահանջմունքների շրջանակով: Այդ արժեքները մեծապես պայմանավորում են պահանջմունքների ու շահերի բովանդակությունը, ինչպես նաև դրանց իրագործման միջոցների և ուղիների ընտրությունը: Այդ իսկ պատճառով ցանկացած մարդկային հանրույթ կապված է ոչ միայն փոխադարձ շահերով, ընդհանուր սպառնալիքներով ու վտանգներով, այլ նաև կենսական խնդիրների ողջ միասնության քիչ թե շատ միանման ըմբռնմամբ¹⁴: Եթե տվյալ հասարակության անդամները չեն կիսում որոշակի ընդհանուր արժեքներ, ապա նրանց համատեղ կյանքը, ըստ էության, կարող է հարցականի տակ դնել այդ սոցիալական համակարգի գոյությունը:

Քննելով սոցիալական համակարգի կայունության և պահպանման հիմնահարցերը՝ կառուցվածքային ֆունկցիոնալիզմի տեսության հիմնադիր Ս. Պարսոնսը գտնում է, որ գոյատևման ու զարգացման համար սոցիալական հանրույթը պետք է պահպանի մշակութային ուղղվածության միասնություն, որպեսզի համակարգը և նրա առանձին տարրերը ունենան սոցիալական ինքնության միասնական հիմքեր¹⁵: Այդ իմաստով հասարակությունը մարդկային հանրույթը ինտեգրող գործոն է և, փոխազդելով մարդկանց սոցիալական կողմնորոշումներն արտահայտող արժեքային կողմնորոշումների հետ, նպաստում է տվյալ էթոնոսի անդամների ինքնանույնականության վերարտադրությանը:

Այս առնչությամբ տեսական հետաքրքրություն ունի այն հարցը, թե արմատական սոցիոմշակութային փոխակերպումների փուլում ազգային ինքնությունն ի՞նչ ազդեցությունների ու փոփոխությունների կարող է ենթարկվել, և անցումային փուլին բնորոշ հատկապես արժեքային ճգնաժամերն ու կոնֆլիկտները ի՞նչպես են ազդում ազգային ինքնության վրա: Հիմնախնդիրը նաև այն է, որ արդի քաղաքակրթության զարգացման արագացված ընթացքը, ինչպես նաև տեղեկատվական բազմապիսի միջոցները մարդկանց հնարավորություն են տալիս արագ արձագանքել սոցիոմշակութային նորամուծություններին և դեկավարվել համընդհանուր չափորոշիչներով: Բայց, որքան էլ պարտոքսալ է, «համաշխարհային» քաղաքացին իր նույնքան համաշխարհային հնարավորությունների համատեքստում փորձում է դեկավարվել նաև էթնիկ պատկանելիությունից անջատվալ արժեքներով: Պատճառն այն է, որ հատկապես ճգնաժամային փուլերում մարդիկ ձգտում են գործել իրենց գոյության սոցիոմշակութային ճշգրտված

¹³ Г. Риккерт. О понятии философии. - В кн.: "Философия жизни", Киев, 1998, с. 456.

¹⁴ Ст'ю А. Г. Здравомыслов, Социология конфликта, М., 1996, էջ 181:

¹⁵ Ст'ю Т. Парсонс, Понятие общества: компоненты и их взаимоотношение. - В кн.: "Американская социологическая мысль", М., 1996, էջ 501:

սահմաններում: Այսպիսով, նախ՝ անհատական սահմանների ընդլայնման միջոցով նոր ինքնության մեջ անհատը փնտրում է հանգստություն ու կայունություն: Բայց երբ հասարակությունը չի ապահովում երաշխավորված կայունություն ու որոշակիություն, մարդկանց մնում է ապավինել էթնիկ պատկանելիությանը համախմբված համակարգին¹⁶:

Խորքային ազգային արժեքներին դիմելը մարդկային հոգեկանի պաշտպանական հակազդեցություն է ընդդեմ ժամանակակից աշխարհի բարդությանը, անդեմությանն ու դատարկությանը: Եվ դա պատահական չէ: Ազգը՝ որպես սոցիալական հանրության կազմակերպման մեզ հայտնի ամենաբարդ ու կատարյալ ձև, ալելի, քան սոցիալական հանրության մյուս տեսակները, ի վիճակի է դիմակայելու արմատական փոխակերպումների հարուցած սոցիալական կատակլիզմներին: Հենց դրանով է բացատրվում հետխորհրդային մի շարք երկրներում ու տարածաշրջաններում զարմանալիորեն արթնացած հետաքրքրությունն ու մղումը դեպի ազգային ու նրա տարրերը: Այսինքն՝ բազմաթիվ հնարավոր ինքնությունների մեջ զարմանալիորեն ամենակայունն ու վստահելին մնում է ազգայինը: Լի՛նելով ինտեգրող գործոն՝ ազգային ինքնության առջև այնուամենայնիվ ծառանում են լուրջ խնդիրներ ու հիմնահարցեր:

Չմանրամասնելով ազգային ինքնության վերոհիշյալ երկու ըմբռնումների առանձնահատկությունները՝ նկատենք, որ ինքնության արդիականացումը արդի քաղաքակրթության մեջ ընթացքից ներառվելու և համաշխարհային գործընթացներին ակտիվորեն մասնակցելու պայմաններից մեկն է: Ինքնության արդիականացումը անխուսափելի է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գոյության ու վարգսցման համար անհրաժեշտ է նկունորեն արձագանքել փոփոխվող պայմաններին: «Վերանորոգվելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամեն ժամ, ամեն վայրկյան»¹⁷, գրում է Գ. Նժդեհը: Ընդ որում, տեսականորեն փոփոխությունների տատանման աստիճանը կարող է մեծ լինել՝ սկսած չնչին ու աննկատ փոփոխությունից, երբ ազգային ինքնությունը որակական լուրջ փոխակերպում չի ապրում, մինչև ազգային ինքնության կորուստը, որի դեպքում անհատը չի նույնացնում իրեն որևէ էթնիկ հանրության հետ, այդ հանրության մշակութային արժեքների կողմն ու կիսողը չէ և ոչ էլ իր գործունեությանը նպաստում է այդ արժեքների վերարտադրությանը:

Յուրաքանչյուր հարաբերականորեն կայուն հասարակություն առաջարկում է որոշակի սոցիալական կազմակերպվածության մոդել՝ հաստատված սոցիալական դերերի, վարքի պարտադիր նորմերի ու կանոնների համակարգով, որոնք ապահովում են ոչ միայն այդ հասարակության համախմբությունն ու օպտիմալ գործառնական վիճակը, այլ նաև զանազան սոցիալական ինստիտուտների միջոցով ամենաամփոփակն ու գործուն կերպով մասնակցում են հասարակական սուբյեկտի ինքնության ձևավորման ու դրսևորման գործընթացներին: Սակայն անցումային հասարակության կառուցվածքային, գործառնական ու վերարտադրական առանձնահատկությունները թելադրում են «խաղի» տրամագծորեն հակադիր պայմաններ, ինչն էլ իր անխուսափելի ներգործությունն ունի ինքնության ձևավորման ու վերարտադրության վրա: Սոցիալական կառուցվածքի հստակ որոշարկվածության բացակայությունը հանգեցնում է, առաջին հերթին, սոցիալական դերերի անորոշությանն ու երկդիմությանը, նվազում է ինքնության ձևավորման ու համամասնակից սոցիալական գործունեների դերը, բացի այդ վերջիններս, ենթարկվելով սոցիալական համակարգին բնորոշ երկիշխանության

¹⁶ Տե՛ս Գ. Ս. Սոլդատով, Этническая идентичность. В кн.: «Психология самознания», Самара, 2000, էջ 667:

¹⁷ Նժդեհ Գարեգին, Բաց նամակներ հայ մտավորականությանը, «Հավատամք», Եր., 1991, էջ 58:

տրամաբանությամբ, գործում են հակադիր, իսկ հաճախ նաև հակասող միտվածությամբ, ինչն էլ չի կարող հիմք լինել միատարր ինքնության գոյության ու ձևավորման համար: Պատահական չէ, որ վերջերս շրջանառության մեջ է դրվել այսպես կոչված «ինքնության քաղաքականություն» հասկացությունը, որը ուղղված է հենց վերոհիշյալ խնդիրներին: Ըստ էության ինքնությունը և հատկապես ազգային ինքնությունը հոգևոր-հոգեբանական կառույց է, մշակույթի ու քաղաքակրթության ծնունդ, և, ինչպես ամեն մի հոգևոր-հոգեբանական համակարգ, այն իր փոփոխության ու հարաշարժության մեջ առավել քան պահպանողական է և, որպես մշակույթի ու քաղաքակրթության ծնունդ, պահանջում է որոշակի «խնամք» և «հոգածություն»: Հակառակ դեպքում կարող ենք գործ ունենալ «համաշխարհային քաղաքացու» համախտանքի հետ, որը հաճախ չի համապատասխանում «համաշխարհային քաղաքացու» բուն գաղափարին:

Այսպիսով, ազգային ինքնության լինելիության ու գործառնական առանձնահատկությունների վերհանումը սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում ցույց է տալիս, որ ըստ էության գոյատևում ու զարգացման հեռանկարներ ունեն միայն այն ազգերը, որոնք ունակ են ճկունորեն արձագանքելու հարափոփոխ հանգամանքներին: Բացի այդ, կարևոր է նաև այն արժեքների դերը, որոնք ներուճակորեն բնորոշ են նրանց մշակութային համակարգին, և որոնց արդիականացումը հնարավորություն կընձեռի խոսել զարգացման նոր որակական մակարդակի մասին: Ազգային ինքնությունը անցումային հասարակության պայմաններում կարող է լինել այն գործոնը, որը առավելապես դիմակայելով օտարածին արժեքների էքսպանսիային, արդյունավետորեն ու ընտրողաբար կմասնակցի նրանց տեղայնացմանն ու «մարմնանը», կդառնա հասարակական համերաշխության հիմքը և փոխհանդուրժողականության աղբյուրը:

Н. Ж. МКРТЧЯН - Проблема национальной идентичности в контексте социокультурных преобразований. - Статья посвящена вопросу национальной идентичности в контексте социокультурных преобразований. Рассматриваются те возможные перемены, последствия, которые претерпевает национальная идентичность в ходе фундаментальных преобразований социальной системы. Наличие двух иногда противоположных социокультурных полей, нормативно-функциональная неопределённость порождают конфликты. Эти конфликты дисфункциональны для общества, но вместе с тем могут играть и положительную роль в адаптации социальной системы к новым условиям. В этих преобразованиях решающее значение приобретает национальная идентичность, которая сама активно включается в эти процессы, может обусловить ход преобразований и сама претерпеть серьёзные перемены.